ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱԳՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ-ԱՏԵՍՏԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ՝

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Դիվանագիտական ծառայության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով և ՀՀ արտաքին գործերի նախարարի 2018թ. դեկտեմբերի 10-ի «Դիվանագիտական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու մասին» թիվ 2616-Ն հրամանով՝ ՀՀ ԱԳՆ մրցութային-ատեստավորող հանձնաժողովը հայտարարում է մրցույթ՝ հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար.

1. Ամերիկյան երկրների վարչության Կենտրոնական և Հարավային Ամերիկայի երկրների բաժնի կցորդ (իսպաներենի գերազանց իմացությամբ)
2. Ամերիկյան երկրների վարչության Կենտրոնական և Հարավային Ամերիկայի երկրների բաժնի կցորդ (իսպաներենի գերազանց իմացությամբ)
3. Ամերիկյան երկրների վարչության ԱՄՆ և Կանադայի բաժնի 3-րդ քարտուղար (անգլերենի գերազանց իմացությամբ)
4. Ասիայի և խաղաղօվկիանոսյան երկրների վարչության Հյուսիսարևելյան Ասիայի բաժնի 3-րդ քարտուղար (չինարենի գերազանց իմացությամբ)
5. Ասիայի և խաղաղօվկիանոսյան երկրների վարչության Հարավարևելյան Ասիայի և Օվկիանիայի բաժնի կցորդ (անգլերենի գերազանց իմացությամբ)
6. Բազմակողմ քաղաքականության և զարգացման համագործակցության վարչության ՄԱԿ-ի և կայուն զարգացման բաժնի 3-րդ քարտուղար (անգլերենի գերազանց իմացությամբ)
7. Բազմակողմ քաղաքականության և զարգացման համագործակցության վարչության բազմակողմ տնտեսական համագործակցության բաժնի 3-րդ քարտուղար (անգլերենի գերազանց իմացությամբ)
8. Բազմակողմ քաղաքականության և զարգացման համագործակցության վարչության ՅՈՒՆԵՍԿՕ-ի և բազմակողմ կրթամշակութային համագործակցության բաժնի կցորդ (անգլերենի գերազանց իմացությամբ)
9. Եվրասիական տարածաշրջանի վարչության երկկողմ հարաբերությունների բաժնի կցորդ (ղազախերենի գերազանց իմացությամբ)
10. Եվրոպայի վարչության երկկողմ հարաբերությունների 1-ին բաժնի կցորդ (ֆրանսերենի գերազանց իմացությամբ)
11. Եվրոպայի վարչության երկկողմ հարաբերությունների 1-ին բաժնի կցորդ (ֆրանսերենի գերազանց իմացությամբ)
12. Եվրոպայի վարչության երկկողմ հարաբերությունների 1-ին բաժնի կցորդ (գերմաներենի գերազանց իմացությամբ)
13. Եվրոպայի վարչության երկկողմ հարաբերությունների 1-ին բաժնի կցորդ (իսպաներենի գերազանց իմացությամբ)
14. Եվրոպայի վարչության երկկողմ հարաբերությունների 1-ին բաժնի կցորդ (իտալերենի գերազանց իմացությամբ)

15. Եվրոպայի վարչության երկկողմ հարաբերությունների 2-րդ բաժնի կցորդ (անգլերենի գերազանց իմացությամբ)
16. Եվրոպայի վարչության երկկողմ հարաբերությունների 2-րդ բաժնի կցորդ (լեհերենի գերազանց իմացությամբ)
17. Եվրոպայի վարչության երկկողմ հարաբերությունների 2-րդ բաժնի կցորդ (հունարենի գերազանց իմացությամբ)
18. Եվրոպայի վարչության ԵՄ բաժնի 3-րդ քարտուղար (անգլերենի գերազանց իմացությամբ)
19. Եվրոպայի վարչության ԵՄ բաժնի կցորդ (անգլերենի գերազանց իմացությամբ)
20. Եվրոպայի վարչության ԵԽ բաժնի կցորդ (անգլերենի գերազանց իմացությամբ)
21. Լրատվության և հանրային դիվանագիտության վարչության լրատվամիջոցների հետ կապի և հանրային դիվանագիտության բաժնի կցորդ (ֆրանսերենի գերազանց մացությամբ)
22. Լրատվության և հանրային դիվանագիտության վարչության օպերատիվ տեղեկատվական բաժնի կցորդ (ռուսերենի և անգլերենի գերազանց իմացությամբ)
23. Մարդու իրավունքների և հումանիտար հարցերի վարչության հումանիտար հարցերի բաժնի 3-րդ քարտուղար (անգլերենի գերազանց իմացությամբ)
24. Մարդու իրավունքների և հումանիտար հարցերի վարչության հումանիտար հարցերի բաժնի կցորդ (անգլերենի գերազանց իմացությամբ)
25. Մարդու իրավունքների և հումանիտար հարցերի վարչության մոնիտորինգային մարմինների հետ համագործակցության բաժնի կցորդ (անգլերենի գերազանց իմացությամբ)
26. Միջազգային անվտանգության վարչության միջազգային անվտանգության համագործակցության և խաղաղապահության բաժնի 3-րդ քարտուղար (անգլերենի գերազանց իմացությամբ)
27. Միջազգային անվտանգության վարչության միջազգային անվտանգության համագործակցության և խաղաղապահության բաժնի կցորդ (անգլերենի գերազանց իմացությամբ)
28. Միջին Արևելքի և Աֆրիկայի վարչության Աֆրիկայի բաժնի կցորդ (ֆրանսերենի գերազանց իմացությամբ)
29. Միջազգային պայմանագրերի և իրավունքի վարչության միջազգային իրավունքի և ազգային օրենսդրության բաժնի կցորդ (իրավագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթությամբ)
30. Միջազգային պայմանագրերի և իրավունքի վարչության բազմակողմ միջազգային պայմանագրերի բաժնի կցորդ (իրավագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթությամբ)
31. Սահմանակից երկրների վարչության երկկողմ հարաբերությունների 1-ին բաժնի 3-րդ քարտուղար (վրացերենի գերազանց իմացությամբ)
32. Սահմանակից երկրների վարչության երկկողմ հարաբերությունների 2-րդ բաժնի 3-րդ քարտուղար (ադրբեջաներենի գերազանց իմացությամբ)
33. Սահմանակից երկրների վարչության երկկողմ հարաբերությունների 3-րդ բաժնի կցորդ (պարսկերենի գերազանց իմացությամբ)

Նշված պաշտոններին ներկայացվող հիմնական պահանջներն են.

1. ՀՀ քաղաքացիություն,
2. հայերենի և առնվազն երկու օտար լեզվի ազատ տիրապետում,
3. բարձրագույն կրթություն (հավատարմագրված մասնագիտություն ստանալու մասին վկայագիր),
4. համակարգչային գիտելիքներ:

Մրցույթին մասնակցելու համար սահմանվում են հանրային ծառայության ոլորտում կամ մասնագիտական աշխատանքային ստաժի և փորձի հետևյալ չափանիշները.

1. 3-րդ քարտուղար՝ առնվազն 2 տարվա աշխատանքային ստաժ,

2. կցորդի համար աշխատանքային ստաժ չի պահանջվում:

3-րդ քարտուղարի պաշտոնային դրույքաչափը՝ 189 696 ՀՀ դրամ է, կցորդի պաշտոնային դրույքաչափը՝ 163 072 ՀՀ դրամ է՝ ներառյալ հարկերը:

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ ՀՀ Սահմանադրության, պետական կառավարման համակարգի, դիվանագիտական ծառայության հիմունքների, ներքին և արտաքին քաղաքական խնդիրների, հայ ժողովրդի պատմության, միջազգային հարաբերությունների իմացությունը, վերլուծական ունակությունները և լեզուների իմացությունը ստուգելու նպատակով գրավոր քննության և հարցազրույցի:

Մրցույթին մասնակցելու համար քաղաքացին կարող է դիմել ***մինչև*** *3* ***թափուր պաշտոնի*** համար, որոնց պահանջներին բավարարում է՝ ըստ նախապատվության կատարելով համարակալում:

Գրավոր քննությունն անցկացվելու է *2025**թ. հոկտեմբերի 29-ին, ժամը** 10:30* ՀՀ ԱԳՆ վարչական շենքում (ք.Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3):

Հարցաշարին ծանոթանալու համար սեղմեք **այստեղ**:

Հարցազրույցին մասնակցելու իրավունք են ձեռք բերում մրցույթի այն մասնակիցները, ովքեր ճիշտ են պատասխանել գրավոր աշխատանքի բաղադրիչներից ընդհանուրն առնվազն 75 տոկոսին՝ պայմանով, որ որևէ բաղադրիչով հավաքած միավորը պակաս չլինի 70 տոկոսից:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել.

1. դիմում՝ անձնակազմի կառավարման վարչության կողմից սահմանված ձևով (ԴԻՄՈՒՄ),
2. ինքնակենսագրություն (CV),
3. անձը հաստատող փաստաթուղթ,
4. բարձրագույն կրթությունը հաստատող պետական նմուշի կամ օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից տրված, Հայաստանի Հանրապետությունում վավեր ավարտական փաստաթուղթը,
5. տեղեկանք աշխատանքային գործունեության մասին (անրաժեշտության դեպքում),

6. էլեկտրոնային լուսանկար՝ 3x4 սմ չափսի,
7. զինապարտ լինելու դեպքում՝ զինվորական գրքույկի պատճենը, իսկ ժամկետային զինվորական ծառայություն չանցած արական սեռի անձանց՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով զինվորական հաշվառման մեջ գտնվելու, ժամկետային զինվորական ծառայությունից ազատված լինելու կամ ժամկետային զինվորական ծառայությունից տարկետման իրավունք ունենալու վերաբերյալ համապատասխան տեղեկանք,
8. հայտարարություն այն մասին, որ անձը չի տառապում Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի N 98-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված դիվանագիտական ծառայությանը խոչընդոտող հիվանդությամբ, դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ դատական կարգով չի զրկվել հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից, չի դատապարտվել հանցագործություն կատարելու համար կամ հանցագործության կատարման դեպքում դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված է (**Ձև** 1),
9. համաձայնություն պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում անձի վերաբերյալ պահվող տեղեկություններին ծանոթանալու մասին (**Ձև** 2):

Մրցույթի մասնակիցներն իրենց հայեցողությամբ կարող են ներկայացնել նաև մասնագիտական գիտելիքները և գործնական կարողությունները հավաստող այլ փաստաթղթեր:

Մրցույթի փաստաթղթերի ընդունումն իրականացվելու է էլեկտրոնային եղանակով, պահանջվող փաստաթղթերը, դիմումը, Ձև 1-ը և Ձև 2-ը լրացված տարբերակով անհրաժեշտ է ուղարկել *mrtsuyt@mfa.am* ***էլեկտրոնային հասցեին:***

Վերը նշված փաստաթղթերի ընդունումն իրականացվելու է 2025**թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 26-ը ներառյալ**, վերջնաժամկետից ուշ ներկայացված դիմումները չեն ընդունվելու:

Տեղեկությունների համար դիմել ՀՀ ԱԳՆ անձնակազմի կառավարման վարչություն, հեռ. (060) 620-630: